ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-250 - 2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 16 » « 05 » 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Չուլյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագիր» ծրագրի «11002. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել աշխատանքներ՝ համաձայն.

1.1.1. կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջելու և ստանալու տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված

ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը, մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայելու (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայելու սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումներով արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպչական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրից քսան աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝ ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն,

2.4.5. արտերկրի հրատարակչությունների հետ կնքվելիք պայմանագրերում սահմանել, որ վերջինները պարտավոր են գրքերը հրատարակելուց հետո 20 օրինակ, իսկ ստեղծագործողները, հետազոտողները և թարգմանիչները՝ 5 օրինակ ուղարկել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին,

2.4.6. սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների մակետները (խմբագրված և սրբագրված)՝ որպես բովանդակային հաշվետվություն, էլեկտրոնային կրիչ(ներ)ով պետական մարմնին ներկայացնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 10-ը, իսկ այդ աշխատանքների հրատարակման հաշվետվությունը՝ ներկայացնել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 10-ը,

2.4.7. ստեղծագործողների, հետազոտողների և թարգմանիչների հետ կնքել «Գույքային իրավունքի օգտագործման պայմանագրեր»՝ ընդգծելով, որ գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է,

2.4.8. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման դեպքում հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում պետական մարմնի պահանջով տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպությունների կամ մեկենասի ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.9. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.10. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.11. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.12. սույն պայմանագրի 2.4.6-րդ ենթակետով և 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ, և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին՝ պարտադիր կցելով ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ սույն պայմանագրի Հավելված 3-ը,

2.4.13. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում **35000.0** (երեսունհինգ միլիոն) հազար դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի 80 %-ը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, իսկ 20 %-ը՝ պայմանագրի 2.4.6-րդ ենթակետով նախատեսված

մակետները ընդունելուց հետո կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայելու սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. դեկտեմբերի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունելու դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 5-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ

ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.6. Սույն պայմանագրի 6.4-րդ և 6.5-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացնում է պետական մարմինը և (կամ) նրա կողմից լիազորված անձը:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկներ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032753	Հ/Հ 900018001538,
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ 01506092
Գլխավոր քարտուղար՝	Հեռ.՝ 060 623 514
	Տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան	_____ Ա. Չուլյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 16 » « 05 » 2023 թ.
N ՄՇԴ - 250 - 2023 պայմանագրի

2023 թվականի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ

Հ/Հ	Թարգմանական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի հեղինակը, թարգմանիչը	Թեման կամ վերնագիրը	Ծավալը (էջ)	Գումարը (հազար դրամ)
Ստեղծագործական աշխատանքներ				
1	Արտավազդ Եղիազարյան	«Վիշապաքարի գաղտնիքը 2» *(աշխատանքային վերնագիր, վեպ)*	130	541.7
2	Լիլիթ Ալթունյան	«Խավարի թագավորը» *(մանկական պատկերագիրք)*	32	541.7
3	Հովհաննես Երանյան	«Բրուտի երկրորդ աշակերտը» *(պատմվածքների ժողովածու)*	100	541.7
4	Շանթ Մկրտչյան	«Ցաքուցրիվ» *(բանաստեղծությունների ժողովածու)*	73	541.7
5	Երվանդ Վարդանյան	«NONO» *(վեպ)*	110	541.7
6	Աննա Դավթյան	«Զորա» *(վեպ)*	170	625.0
7	Գրիշա Սարդարյան	«Հրամանագիրք» *(վեպ)*	230	500.0
8	Կարեն Անտաշյան	«Հա՛, չէ՞» *(բանաստեղծությունների ժողովածու)*	150	541.7
9	Ներսես Աթաբեկյան	«Վավերական» *(բանաստեղծությունների ժողովածու)*	75	541.7
10	Կարինե Խոդիկյան	«Հետադարձ վերադարձ» *(վեպ)*	300	583.3
11	Ալիս Հովհաննիսյան	«Աղաների դարը և հետոն» *(վեպ)*	200	541.7
12	Լուսինե Շահնազարյան	«Ճապիճուկները» *(մանկապատանեկան վիպակ)*	120	500.0
13	Արմինե Անդա (Արմինե Աբրահամյան)	«Փերէլֆի գաղտնիքը» *(մանկական պատկերագիրք)*	32	500.0
14	Համբարձում Համբարձումյան	«Տասը պատմվածք պատերազմի մասին» *(պատմվածքների ժողովածու)*	60	416.7
15	Անահիտ Ղազախեցյան	«Բանաստեղծություններ» *(աշխատանքային վերնագիր)*	150	541.7
16	Սարգիս Հովսեփյան	«Սորուն նյութեր» *(վեպ)*	180	625.0
Հետազոտական աշխատանքներ				

17	Աելիտա Դոլուխանյան	«Հայ Բագրատունիների մայրաքաղաք Անին օտարազգի հայագետների և ճանապարհորդների գնահատմամբ»	140	500.0
18	Սլավիկ Հարությունյան	«1960-1990 թվականների հայ գեղարվեստական արձակի էկրանավորում»	80	500.0
19	Ալվարդ Սեմիրջյան	«20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները»	100	625.0
20	Տիգրան Գրիգորյան	«Օրբելյանների իշխանությունը միջնադարյան Հայաստանում»	80	583.3
21	Սուրեն Դանիելյան	«Հակոբ Օշականի ստեղծագործական հիմնախնդիրները և դրանց մեկնության մանրուքները»	500	750.0
22	Հայկ Համբարձումյան	«Սննդային կոդերը «Սասնա ծռեր» էպոսում և հայ միջնադարյան գրականության մեջ. հերոսների ճաշացանկը»	120	625.0
23	Աստղիկ Օհանյան	«Հովհաննես Գրիգորյանի պոետիկան»	300	500.0
Թարգմանական աշխատանքներ				
24	Մարսել Պրուստ	«Դեպի Սվանը» *(վեպ, ֆրանսերենից թարգմանությունը՝ Սերգեյ Մկրտչյանի)*	460	666.7
25	Էդգար Պո	«Նովելներ և պատմվածքներ» *(անգլերենից թարգմանությունը՝ Շուշանիկ Ավագյանի)*	230	666.7
26	Արիստոտել	«Պոետիկա» *(հին հունարենից թարգմանությունը՝ Արամ Թոփչյանի)*	250	916.7
Հայ գրականությունը թարգմանություններում				
27	Գրիգ (Գրիգոր Շաշիկյան)	«Հիսուսի կատուն» *(պատմվածքների ժողովածու, ալբաներեն)*	117	833.3
28	Արամ Պաչյան	«P/F» *(վեպ, հունարեն)*	100	800.0
29	Զապել Եսայան	«Սիլիհտարի պարտեզները» *(վեպ, ալբաներեն)*	170	1000.0
30	Գուրգեն Խանջյան	«Ենոքի աչքը» *(վեպ, արաբերեն)*	116	900.0
31	Անուշ Սարգսյան	«Անոն» *(վեպ, արաբերեն)*	133	916.6
32	Հովիկ Աֆյան	«Կարմիր» *(վեպ, արաբերեն)*	68	545.0

33	Ալեքսանդր Թոփչյան	«Բանկ Օտոման» *(վեպ, չեխերեն)*	130	916.6
34	Լևոն Նես (Լևոն Հովհաննիսյան)	«Ստախոսը» *(վեպ, պարսկերեն)*	125	916.6
35	Լևոն Նես (Լևոն Հովհաննիսյան)	«Բալզակ. մի շան պատմություն» *(վիպակ, պարսկերեն)*	72	575.0
36	Գրիշա Սարդարյան	«Եսավ» *(վեպ, ռումիներեն)*	129	916.6
37	Ջեսահ (Գևորգ Սահակյան)	«Անանկենդան» *(վեպ, ռումիներեն)*	171	1000.0
38	Առաքել Սեմիջյան	«Կապտահեր Կյորես. Ո՞ւր» *(վիպակ, ռումիներեն)*	92	750.0
39	Անուշ Սարգսյան	«Անոն» *(վեպ, ռումիներեն)*	133	916.6
40	Արմեն Հայաստանցի (Օհանյան)	«Անտիմիմինո և Կիկոսի վերադարձը» *(պատմվածքների ժողովածու, վրացերեն)*	122	975.8
41	Հովհաննես Թումանյան	«Լոռեցի Սաքոն» *(պոեմ և բանաստեղծություններ, իտալերեն)*	40	329.2
42	Միեր Իսրայելյան	«Մեն ու միակ մոլորակ» *(պատմվածքների ժողովածու, արաբերեն)*	119	916.7
43	Ակսել Բակունց	«Պատմվածքներ» *(մակեդոներեն)*	200	1000.0
Ընդամենը՝ առանց ԱԱՀ-ի				**29,166.7**
ԱԱՀ*				**5,833.3**
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ներառյալ ԱԱՀ-ն				**35,000.0**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032753
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538,
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514
Տնօրեն՝

_____ Ա. Չուլյան

Կ. Տ.

Հավելված N 2
« 16 » « 05 » 2023 թ.
N ՄՇԴ - 250 - 2023 պայմանագրի

2023 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

Կազմակերպության անվանումը՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ					
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝					
Ծրագիր 1124	Միջոցառում 11002	«11002. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին»			
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից, այդ թվում՝ ըստ եռամսյակների (աճողական)			
		I եռամյակ	**I կիսամյակ**	**9 ամիս**	**տարի**
1	2	3	4	5	6
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	4637	**0.0**	**17,500.0**	**26,250.0**	**35,000.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032753
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538,
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514
Տնօրեն՝

_____ Ա. Չուլյան

Կ. Տ.

Հավելված N 3
« 16 » « 05 » 2023 թ.
N ՄՇԴ - 250 - 2023 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032753
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538,
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514
Տնօրեն՝

---------- Ա. Չուլյան

Կ. Տ.

Հավելված N 4
« 16 » « 05 » 2023 թ.
N ՄՇԴ-250-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Ծախսային հոդվածը (աշխատանքի անվանումը)	Գումարը՝ համաձայն պայմանագրի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը պայմանագրով հաստատվածի համեմատ (+- դրամով)	Ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

Հավելված N 5
« 16 » « 05 » 2023 թ.
N ՄՇԴ-250-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032753
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան « » « » 2023

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը՝ N ՄՇԴ « » « » 2023 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____-ի *(անուն, ազգանուն)* և Կազմակերպությունը, ի դեմս -ի տնօրեն _____-ի *(անուն, ազգանուն)*, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2023 թ. եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ. N « » եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակում իրականացրել է

միջոցառումը, իսկ Պետական մարմինը վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

Կ. Տ.